

Ու բանուորներն ու հօտաղ՝
ճամբաներէն բալածիգ:

Ճառագայթներ խուսափուկ
Լիճերուն 1[1] մէջ կը խաղան,
Եւ յանկարծ թոյր մը դեղծան
Կը ներկէ ջուրը փափուկ:

Ու բոցեղէն լեզուակներ
Կը ծըծեն մեզն համօրէն,
Արեւին կեանքն 1[1] հըրեղէն,
Արեւին փա՛ռքն 1[1] անըստուեր...

Յոգիես ներս կը խուժէ
Քրքումն ալիքի նըման,
Եւ հովիկին առտըւան
Գինովութիւնն հաշիշէ:

1[1]Լիճը բոսոր հարսնուկի,
Յորենի ծովը կանանչ,
Կը հծծին 1[1] տաղն անճանաչ
Մըտերմասաց շըշուկի:

Ու մարմանդները ճանճկէն,
Ու սարերը կապտորակ
Եղկ հծծիւնով մը կ'երգեն
Լոյսին ոսկի պատարագ:

Տունկեր ռեհան ծաթրիկի
Կը ծըխեն խունկ մը վայրի,
Որ կ'ամպանայ ու կ'այրի
Բուրվառին մէջ արփենի:

Յոգիես նե՛րս կը խուժէ
Քրքումն՝ ալիքի նըման,
Եւ հովիկին առտըւան
Գինովութիւնն հաշիշէ...